ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՋԿ-ՀՄԱԱՇՁԲ-25/4-Ա

ք. Երևան «24» Սեպտեմբեր 2025թ.

«Ջրային կոմիտեն», ի դեմս գլխավոր քարտուղար Ա. Ղազարյանի, որը գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Մելիորացիա» ՓԲԸ-ն, ի դեմս գլխավոր տնօրեն Ս. Միրոյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2025 թվականի մայիսի 8-ի թիվ 565-Ն որոշումը կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է 2024 թվականի մայիսի 25-26-ը Հայաստանի Հանրապետության Լոռու մարզում, հորդառատ անձրևներով պայմանավորված, հեղեղումների պատճառով առաջացած արտակարգ իրավիճակի հետևանքների վերացման նպատակով Դեբեդ, Փամբակ, Ձորագետ, Շնող և Տաշիր գետերի խնդրահարույց հատվածների մաքրման, ինչպես նաև 2025 թվականի հնարավոր վարարումների ռիսկերի կառավարման նպատակով իրականացնել հակահեղեղային անհետաձգելի աշխատանքների կատարումը, որը հաստատվել է ՀՀ կառավարության 2025 թվականի մայիսի 8-ի թիվ 565-Ն որոշման N 8 հավելվածով:

1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող աշխատանք.

ա) Չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված աշխատանքի արդյունքը, իսկ աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1.Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է 278,790,000 (երկու հարյուր յոթանասունութ միլիոն յոթ հարյուր իննսուն հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.1.1 Պայմանագրի գնից՝ մինչև 83,637,000 (ութսուներեք միլիոն վեց հարյուր երեսունյոթ հազար) ՀՀ դրամը, Պատվիրատուն փոխանցում է Կատարողի բանկային հաշվին՝ որպես կանխավճար: Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Ընդ որում մինչև կանխավճարի ամբողջական մարումը, Կատարողին վճարումներ չեն կատարվում:

4.2 Պատվիրատուն կատարված աշխատանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը: Պայմանագրի պայմանները տարածվում են մինչև ՀՀ կառավարության 2025 թվականի մայիսի 8-ի թիվ 565-Ն որոշումն ուժի մեջ մտնելը Պայմանագրի կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների վրա:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Եթե պայմանագիրն իրականացվում է ենթակապալի պայմանագիր կնքելու միջոցով.

1) Կատարողը պատասխանատվություն է կրում ենթակապալառուի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում ենթակապալառուի փոփոխման դեպքում Կատարողը գրավոր տեղեկացնում է Պատվիրատուին՝ տրամադրելով ենթակապալի պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

ա. ենթակապալառու թիվ 1 «ՕՁՈՒՆ-ՏՈՒՐ» ՍՊԸ-ն տնօրեն Ս. Դավթյան, հասցե՝ Լոռու մարզ գ.Օձուն, փողոց 14, տուն 14, ՀՎՀՀ 0661007, Հ/Հ 220323334361000, բանկը՝ «ԱԿԲԱ Բանկ» ԲԲԸ,

բ. ենթակապալառու թիվ 2–«Էդգար Բաբայան Արտաշի» ԱՁ, հասցե՝ Լոռու մարզ, գ.Շնող, փ.7/14, ՀՎՀՀ 66967519, Հ/Հ 22039828503000, բանկը՝ «ԱԿԲԱ Բանկ» ԲԲԸ,

գ. ենթակապալառու թիվ 3 – «ԷԼԻՏ ՇԻՆ» ՍՊԸ-ն, հասցե՝ Կոտայքի մարզ, Զովունի 1, փ.168/1, ՀՎՀՀ 03315496, Հ/Հ 220290127673000, բանկը՝ «ԱԿԲԱ Բանկ» ԲԲԸ:

7.7 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

7.8 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.9 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.10 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.13 Կատարողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կատարողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական

գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը:[1]

7.13 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.14 Պայմանագիրը կազմված է 14 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 3.1 և N 4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.15 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Ջրային կոմիտե	«Մելիորացիա» ՓԲԸ
ՀՀ ք. Երևան, Վարդանանց 13ա	ՀՀ Արարատի մարզ, ք. Էջմիածին,
scws@scws.am	գ.Հայանիստ, փ.22
Հ/Հ 900011056836	«Ամերիաբանկ ՓԲԸ
ՀՎՀՀ 02555816	Հ/Հ 1570069947419400
Կոմիտեի գլխավոր քարտուղար	ՀՎՀՀ 04214258
	էլ. հասցե՝ melioracia00@mail.ru
	Գլխավոր տնօրեն
Լ. ՂԱԶԱՐՅԱՆ	Ա. ՄԻՐՈՅԱՆ
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
«27» [illegible] 2025թ. կնքված
ՁԿ-ՀՄԱԱՇՁԲ-25/4-Ա ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի								
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	կատարման	
							հասցեն	ժամկետը
1	45241131/1	գետերի հոսանքների կարգավորման և ջրհեղեղների վերահսկման աշխատանքներ	դրամ	278,790,000	278,790,000	1	ՀՀ Լոռու մարզ	3 ամիս

Տեխնիկական բնութագիր

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզում, հորդառատ անձրևներով պայմանավորված, հեղեղումների պատճառով առաջացած արտակարգ իրավիճակի հետևանքների վերացման նպատակով Դեբեդ, Փամբակ, Ձորագետ, Շնող և Տաշիր գետերի խնդրահարույց հատվածների մաքրման, ինչպես նաև 2025 թվականի հնարավոր վարարումների ռիսկերի կառավարման նպատակով հակահեղեղային անհետաձգելի միջոցառումների իրականացում

Ընդհանուր տվյալներ

Հարավկովկասյան երկաթուղու ՀՀ Լոռու մարզի Ալավերդի-Ախթալա հատվածում 2024 թվականին հեղեղումներից առաջացած փլուզումները վերացնելու նպատակով ՀՀ ՏԿԵՆ ջրային կոմիտեի, ջրային համակարգերի օգտագործման և պահպանության տեխնիկական հանձնաժողովի, «Մելիորացիա» ՓԲԸ-ի, ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի, «Լոռի» ՋՕԸ-ի համապատասխան ներկայացուցիչները տեղում իրականացրել են գետերի հուների ակնադիտական ուսումնասիրություն: Ուսումնասիրությունից պարզվել է, որ անհրաժեշտ է իրականացնել գետի հունի մաքրման և ափերի ամրացման աշխատանքներ՝ հստակեցվել են գետի հունի մաքրման և ափերի ամրացման աշխատանքների առաջնահերթ իրականացվող հատվածները և գնահատվել են աշխատանքների մոտավոր ծավալները:

Հրատապ մաքրման աշխատանքներ

1. **Վահագնաձոր համայնք, Փամբակ գետի** հունում առաջացած կղզյակը խանգարում է գետի ազատ հոսքին: Անհրաժեշտ է իրականացնել Վահագնաձորի կամրջից ներքև Փամբակ գետի հունի մաքրում 15.0մ լայնությամբ, մոտ 1.5մ խորությամբ, 100մ երկարությամբ, գետի կենտրոնում աճած ծառերի կտրում արմատախիլ անելով:
2. Վահագնաձորի վերջնամասում Փամբակ գետը կիսվել և հոսում է երկու մասով, սպառնում է Մ-6 մայրուղուն և ցանքատարածքներին, միջանկյալ հատվածում կղզյակ է առաջացել կոպճա-ճալաքարային գրունտից և խոշոր քարերից՝ 25-30մ լայնությամբ, մոտ 1.5մ խորությամբ, 350մ երկարությամբ: Հանված գրունտը անհրաժեշտ տեղափոխել գետի ձախ ափ Մ-6 մայրուղու կողմում կատարել կողլիցք:
3. **Քոբայրի հատված, Դեբեդ գետի** մաքրում 30.0մ լայնությամբ, 2.0-2.5մ խորությամբ, մոտ 260մ երկարությամբ խոշոր քարերից և ուղղորդում դեպի ափերը: Սպառնում է երկաթուղային գծերին և ցանքատարածքներին:
4. **Սանահին կայարանի վերևի հատված /Կամչատկա/ Դեբեդ գետի** կենտրոնական մասում կղզյակ է առաջացել կոպճա-ճալաքարային գրունտից և խոշոր քարերից՝ 20մ լայնությամբ, մոտ 1.5-2,0մ խորությամբ, 350մ երկարությամբ: Հանված գրունտը անհրաժեշտ է տեղափոխել դեպի ափեր, անելով կողլիցք: Սպառնում է ցանքատարածքներին:

5. **Սանահին կայարանի մուտքի սկզբնամաս, Դեբեդ գետ,** Սանահին կայարանի մուտքի սկզբնամասում գետի ձախ ափին 50մ երկարությամբ, 15մ լայնությամբ, մոտ 1,0-1.5մ տրամագծի խոշոր քարեր են, որոնք խանգարում են գետի ազատ հոսքին: Անհրաժեշտ է գետի հունից հանել խոշոր քարերը և տեղադրել նույն ափին, ստեղծելով ափապաշտպան կառույց: Այս հատվածից 50մ վերև հոսանքի ուղղությամբ աջ ափին կուտակված կոպճա-ճալաքարային գրունտը պետք է մաքրել և տեղափոխել ձախ ափ կողլիցքով: Սպառնում է երկաթուղային գծերին և բնակֆոնդին:

6. **Սանահին կայարանի վերջնամաս, երկաթգծի թունելի ստորին հատված, Դեբեդ գետի** կենտրոնական մասում կղզյակ է առաջացել կոպճա-ճալաքարային գրունտից և խոշոր քարերից՝ 20մ լայնությամբ, մոտ 1.5-2,0մ խորությամբ, 40մ երկարությամբ: Հանված գրունտը անհրաժեշտ տեղափոխել դեպի ձախ ափ, անելով կողլիցք: Սպառնում է երկաթուղային գծերին:

7. **ք.** Ալավերդի, Բաղրամյան թաղամաս, Դեբեդ գետը կիսվել և հոսում է երկու մասով, միջանկյալ հատվածում կղզյակ է առաջացել կոպճա-ճալաքարային գրունտից և խոշոր քարերից՝ 50-60մ լայնությամբ, 2,0-2.5մ խորությամբ, մոտ 350մ երկարությամբ: Սպառնում է երկաթուղային գծերին և բնակֆոնդին, թաղամասում կառուցված սեփական տները հայտնվել են գետի հունում:

8. **ք.** Ալավերդի, Կացոց թաղամաս, Դեբեդ գետը փոխել է հունը, նախկին հունում հայտնվել են խոշոր քարեր և կոպճային գրունտ, հաստաբուն ծառեր:

9. **Շնող համայնք, Դեբեդ գետ, չ**հասած Շնող գետի ձախ ափին 80մ երկարությամբ հատված, 15մ լայնությամբ, 1,5մ խորությամբ՝ քարեր, կոպճային գրունտ:

10. **Շնող համայնք, Շնող գետ,** Դեբեդ գետի Շնող վտակը իր գետաբերանից սկսած շուրջ 800 մ վերև ընկած տեղամասում ընթանում է լիցքերի վրա կառուցված Շնող տանող ճանապարհի եզրով: Ապառնում է Թեղուտ և Շնող բնակավայրերի բնակֆոնդին և հարակից տնամերձ հողամասերին:

11. **Ճոճկան համայնք, Դեբեդ գետ,** Ճոճկան-1 պոմպակայանի մղման խողովակաշարից վերև գետի ձախ ափին 10մ լայնությամբ, 70մ երկարությամբ , 1,0մ խորությամբ կոպճա-ճալաքարային գրունտի մաքրում կողլիցքով: Սպառնում է պոմպակայանի մղման խողովակաշարին և տնամերձ հողամասերին:

12. **Արևածագ համայնք, գետ Ձորագետ**, Արևածագի Ձոր կոչվող տարածքում /հանգստյան գոտի/ Ձորագետի հունի մեջ առաջացել են կղզյակներ: Մաքրված 1000մ^3 տիղմը և աղբը տեղափոխվում է 6կմ հեռավորության վրա գտնվող աղբավայր: Մյուս 1000մ^3 հանված գրունտը արվում է կողլիցք ափերին:

13. **ք. Տաշիր, Տաշիր գետի հունը** 6կմ երկարությամբ, 12մ լայնությամբ և մոտ 1.5մ խորությամբ լցված է տիղմով, տարբեր տիպի նստվածքներով: Գետի հունը աշխատում է 1/3 կտրվածքի չափով, երկար տարիներ չի մաքրվել: Տաշիր գետ թափվող սելավատարի 400մ հատված 5մ լայնությամբ և մոտ 1.0մ խորությամբ նույնպես լցված է տիղմով: Սելավատարից և Տաշիր գետի հունի 3,0կմ հատվածից հանված տիղմը և աղբը տեղափոխվում է 6կմ հեռավորության վրա գտնվող աղբավայր: Տաշիր գետի հունի մյուս 3,0կմ հատվածից հանված գրունտը արվում է կողլիցք ափերին: Սպառնում է բնակֆոնդին, տնամերձ հողամասերին:

Վերը նշված աշխատանքներում անհրաժեշտ է ներառել նաև՝

- խիտ թփուտներից տարածքի մաքրման աշխատանքները.
- մոտեցնող ճանապարհների պրոֆիլավորման, կառուցման, հարթեցման աշխատանքները,
- կտրած և արմատահանված թփուտների հավաքման, տեղափոխման աշխատանքները:

1. Առաջարկված լուծումները պետք է՝

ա/ Ապահովեն գետի հոսքերի կանոնավոր ընթացքի խոչնդոտների վերացումը,

բ/ հիմնված լինեն ՀՀ-ում գործող տեխնիկական նորմերի, ստանդարտների, միջպետական շինարարական նորմերի վրա /ՀՀՇՆ, СниП, ГОСТ, СТСЭВ, ՀUS, ՇՆԶ, МСП և այլն/:

Հակահեղեղային անհետաձգելի միջոցառումների ցանկ

ՀՀ կառավարության 2025 թվականի մայիսի 8-ի թիվ 565-Ն որոշում

Հավելված 8

Աշխատանքներն ընդունվելու են փաստացի իրականացված ծավալներին համապատասխան:

Հ/Հ	Համայնքի անվանումը	Աշխատանքների կատարման օբյեկտը	Անհրաժեշտ միջոցառումները և աշխատանքների ծավալները	Հողային աշխատանքների մոտավոր	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	Նշումներ

				ծավալը, մ³			
			Լոռու մարզ				
1	Վահագնաձոր*	Փամբակ գետ	Վահագնաձորի կամրջից ներքև Փամբակ գետի հունի մաքրում 15.0մ լայնությամբ, մոտ 1.5մ խորությամբ, 100մ երկարությամբ, գետի կենտրոնում աճած ծառերի կտրում արմատախիլ անելով:	2000	1000	2 000 000	Փամբակ գետի հունում առաջացած կղզյակը խանգարում է գետի ազատ հոսքին: Առաջարկվում են նախագծային լուծումներ:
2	Վահագնաձոր *	Փամբակ գետ	Վահագնաձորի վերջնամասում Փամբակ գետը կիսվել և հոսում է երկու մասով, միջանկյալ հատվածում կղզյակ է առաջացել կոպճա-ճալաքարային գրունտից և խոշոր քարերից՝ 25-30մ լայնությամբ, մոտ 1.5մ խորությամբ, 350մ երկարությամբ: Հանված գրունտը անհրաժեշտ է տեղափոխել գետի ձախ ափ, Մ-6 մայրուղու կողմում կատարել կողլիցք:	35000	1200	42 000 000	Սպառնում է Մ-6 մայրուղուն և ցանքատարածքներին: Պահանջվում են հրատապ մաքրման աշխատանքներ:
3	Քոբայրի հատված *	Դեբեդ գետ	Դեբեդ գետի մաքրում 30.0մ լայնությամբ, 2.0-2.5մ խորությամբ, մոտ 260մ երկարությամբ խոշոր քարերից և ուղղորդում դեպի ափերը:	35000	1400	49 000 000	Սպառնում է երկաթուղային գծերին և ցանքատարածքներին: Պահանջվում են հրատապ մաքրման աշխատանքներ:
4	Սանահին կայարանի վերևի հատված /Կամչատկա/ *	Դեբեդ գետ	Դեբեդ գետի կենտրոնական մասում կղզյակ է առաջացել կոպճա-ճալաքարային գրունտից և խոշոր քարերից՝ 20մ լայնությամբ, մոտ 1.5-2,0մ խորությամբ, 350մ երկարությամբ: Հանված գրունտը անհրաժեշտ է տեղափոխել դեպի ափեր, անելով կողլիցք:	22000	1200	26 400 000	Սպառնում է ցանքատարածքներին: Պահանջվում են հրատապ մաքրման աշխատանքներ:
5	Սանահին կայարանի մուտքի սկզբնամաս *	Դեբեդ գետ	Սանահին կայարանի մուտքի սկզբնամաս գետի ձախ ափին 50մ երկարությամբ, 15մ լայնությամբ, մոտ 1,0-1.5մ տրամագծի խոշոր քարեր են, որոնք խանգարում են գետի ազատ հոսքին: Անհրաժեշտ է գետի հունից հանել խոշոր քարերը և տեղադրել նույն ափին, ստեղծելով ափապաշտպան կառույց: Այս հատվածից 50մ վերև հոսանքի ուղղությամբ աջ ափին կուտակված կոպճա-ճալաքարային գրունտը պետք է մաքրել և տեղափոխել ձախ ափ կողլիցքով:	1500	1300	1 950 000	Սպառնում է երկաթուղային գծերին և բնակֆոնդին: Պահանջվում են հրատապ մաքրման աշխատանքներ:
6	Սանահին	Դեբեդ գետ	Դեբեդ գետի կենտրոնական մասում կղզյակ է առաջացել	23000	1200	27 600 000	Սպառնում է երկաթուղային գծերին:

	կայարան ի վերջնամ աս, երկաթգծ ի թունելի ստորին հատված *		կոպճա-ճալաքարային գրունտից և խոշոր քարերից՝ 20մ լայնությամբ, մոտ 1.5-2,0մ խորությամբ, 40մ երկարությամբ: Հանված գրունտը անհրաժեշտ է տեղափոխել դեպի ձախ ափ, անելով կողլիցք:				Պահանջվում են հրատապ մաքրման աշխատանքներ:
7	ք. Ալավերդ ի, Բաղրամյ ան թաղամա ս *	Դեբեդ գետ	Դեբեդ գետը կիսվել և հոսում է երկու մասով, միջանկյալ հատվածում կղզյակ է առաջացել կոպճա-ճալաքարային գրունտից և խոշոր քարերից՝ 50-60մ լայնությամբ, 2,0-2.5մ խորությամբ, մոտ 350մ երկարությամբ:	18000	1400	25 200 000	Սպառնում է երկաթուղային գծերին և բնակֆոնդին, թաղամասում կառուցված սեփական տները հայտնվել են գետի հունում: Առաջարկվում են նախագծային լուծումներ:
8	ք. Ալավերդ ի, Կացոց թաղամա ս*	Դեբեդ գետ	Դեբեդ գետը փոխել է հունը, նախկին հունում հայտնվել են խոշոր քարեր և կոպճային գրունտ, հաստաբուն ծառեր:	800	1000	800 000	Առաջարկվում են նախագծային լուծումներ:
9	Շնող*	Դեբեդ գետ	Չհասած Շնող գետի ձախ ափին 80մ երկարությամբ հատված, 15մ լայնությամբ, 1,5մ խորությամբ՝ քարեր, կոպճային գրունտ:	2000	1000	2 000 000	Առաջարկվում են նախագծային լուծումներ:
10	Շնող *	Շնող գետ	Դեբեդ գետի Շնող վտակը իր գետաբերանից սկսած շուրջ 800 մ վերև ընկած տեղամասում ընթանում է լիցքերի վրա կառուցված Շնող տանող ճանապարհի եզրով: Նախորդ տարվա հեղեղի ժամանակ այս վտակը հորդանալով մի քանի տեղամասում ամբողջովին ողողվել է և Դեբեդ է լցրել նշված լիցքային ճանապարհի պաստառը՝ զգալի մեծացնելով Դեբեդի ջրաբերուկային կուտակումները: Ողողված տեղամասերից մեկում էլ մարդկային զոհ է գրանցվել: Ողողումների պատճառ են հանդիսանում Շնող վտակի վերջնամասի 3-4 գետահատույթում կուտակված ջրաբերուկները, որոնք խոչընդոտում են հոսանքի ազատ շարժումը: Կուտակումների ընդհանուր ծավալը ընդամենը մի քանի հարյուր խոր.մ է և մաքրելը լուրջ ծախսեր չի պահանջում: Սակայն կուտակումների վնասարար հետևանքները կարող են անհամեմատ մեծ լինել: Հանձնաժողովի այցելության ժամանակ (15.04.2025թ.) Դեբեդի նման	8000	680	5 440 000	Ապառնում է Թեղուտ և Շնող բնակավայրերի բնակֆոնդին և հարակից տնամերձ հողամասերին.Պահանջ վում են հրատապ մաքրման աշխատանքներ:

			այս վտակը ևս հորդացել էր և ակնհայտ երևում էր, որ վտակի հունը առաջնահերթ մաքրման կարիք ունի:				
11	Ճոճկան *	Դեբեդ գետ	Ճոճկան-1 պոմպակայանի մղման խողովակաշարից վերև գետի ձախ ափին 10մ լայնությամբ, 70մ երկարությամբ , 1,0մ խորությամբ կոպճա-ճալաքարային գրունտի մաքրում կողլիցքով:	1000	680	680 000	Սպառնում է պոմպակայանի մղման խողովակաշարին և տնամերձ հողամասերին: Պահանջվում են հրատապ մաքրման աշխատանքներ:
12	Արևածագ*	գետ Ձորագետ	Արևածագի Ձոր կոչվող տարածքում /հանգստյան գոտի/ Ձորագետի հունի մեջ առաջացել են կղզյակներ: Մաքրված 1000մ3 տիղմը և աղբը տեղափոխվում է 6կմ հեռավորության վրա գտնվող աղբավայր: Մյուս 1000մ3 հանված գրունտը արվում է կողլիցք ափերին:	3500	2000x2.1	14 700 000	Պահանջվում են հրատապ մաքրման աշխատանքներ:
				1500	680	1 020 000	
13	ք. Տաշիր *	Տաշիր գետ	Տաշիր գետի հունը 6կմ երկարությամբ, 12մ լայնությամբ և մոտ 1.5մ խորությամբ լցված է տիղմով, տարբեր տիպի նստվածքներով: Գետի հունը աշխատում է 1/3 կտրվածքի չափով, երկար տարիներ չի մաքրվել: Տաշիր գետ թափվող սելավատարի 400մ հատված 5մ լայնությամբ և մոտ 1.0մ խորությամբ նույնպես լցված է տիղմով: Սելավատարից և Տաշիր գետի հունի 3,0կմ հատվածից հանված տիղմը և աղբը տեղափոխվում է 6կմ հեռավորության վրա գտնվող աղբավայր: Տաշիր գետի հունի մյուս 3,0կմ հատվածից հանված գրունտը արվում է կողլիցք ափերին:	17000	1000	17 000 000	Սպառնում է բնակֆոնդին, տնամերձ հողամասերին: Պահանջվում են հրատապ մաքրման աշխատանքներ:
				15000	2000x2.1	63 000 000	

*Աստղանիշով նշված են հրատապ մաքրման աշխատանքներ պահանջող հատվածները:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Ջրային կոմիտե
ՀՀ ք. Երևան, Վարդանանց 13ա
scws@scws.am
Հ/Հ 900011056836
ՀՎՀՀ 02555816
Կոմիտեի գլխավոր քարտուղար

Ա. ՂԱԶԱՐՅԱՆ
(ստորագրություն)

ԿԱՏԱՐՈՂ

«Մելիորացիա» ՓԲԸ
ՀՀ Արարատի մարզ, ք. Էջմիածին,
գ.Հայանիստ, փ.22
«Ամերիաբանկ ՓԲԸ
Հ/Հ 1570069947419400
ՀՎՀՀ 04214258
էլ. հասցե՝ melioracia00@mail.ru
Գլխավոր տնօրեն

Ս. ՄԻՐՈՅԱՆ
(ստորագրություն)

Կ.Տ

«27» Դեկտեմբեր

Հավելված N 2
2025թ. կնքված
ՋԿ-ՀՄԱՇՁԲ-25/4-Ա ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի											
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2025թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում*								
			մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
	45241131/1	գետերի հոսանքների կարգավորման և ջրհեղեղների վերահսկման աշխատանքներ	278,790,000	278,790,000	278,790,000	278,790,000	278,790,000	278,790,000	278,790,000	278,790,000	**278,790,000**

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Ջրային կոմիտե
ՀՀ ք. Երևան, Վարդանանց 13ա
scws@scws.am
Հ/Հ 900011056836
ՀՎՀՀ 02555816
Կոմիտեի գլխավոր քարտուղար

Ա. ՂԱՋԱՐՅԱՆ
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Մելիորացիա» ՓԲԸ
ՀՀ Արարատի մարզ, ք. Էջմիածին, գ. Հայանիստ, փ.22
«Ամերիաբանկ ՓԲԸ
Հ/Հ 1570069947419400
ՀՎՀՀ 04214258
էլ. հասցե՝ melioracia00@mail.ru
Գլխավոր տնօրեն

Ս. ՄԻՐՈՅԱՆ
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված 3
«27» Դեկտեմբեր 2025թ. կնքված
ՋԿ-ՀՄԱՍՇՁԲ-25/4-Ա ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«27» Դեկտեմբեր 2025թ. կնքված
ՋԿ-ՀՄԱՍՇՁԲ-25/4-Ա ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Հավելված N 4
« 27 » Տարիսի 2025թ. կնքված
ՁԿ-ՀՄԱԱՇՁԲ-25/4-Ա ծածկագրով պայմանագրի

ԾԱՆՈՒՑՈՒՄ

________________________________ հայտնում է, որ .
ֆինանսական գործակալի անվանումը

1. ________________ -ի և ________________ -ի միջև «--» 20 թ. կնքված
պատվիրատուի անվանումը կատարողի անվանումը

«---------/---------» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակում իր և

________________ -ի միջև «--» 20 թ-ին կնքվել է «--------------------» ծածկագրով ֆակտորինգի
կատարողի անվանումը

պայմանագիրը,

2. համաձայն է Պայմանագրի 7.12 կետով սահմանված պահանջներին:

________________________________ ________________
ֆինանսական գործակալի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)

ստորագրությունը

Կ. Տ. (առկայության դեպքում)

«--» 20 թ.